



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

## **ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ**

**«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի 2017 թվականի գնումների պլանի  
մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ**

**ԵՐԵՎԱՆ 2017**

## Բովանդակություն

Նախաբան.....	3
1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանգազ» ՍՊԸ-ի 2017 թվականի գնումների պլանի կառուցվածքը.....	4
2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի 2017 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքները .....	6
Առաջարկություն .....	6
Հղումներ .....	7

## Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2017 թվականի աշխատանքային ծրագրի 11-րդ կետի և արտացոլում է հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի N°61Ա որոշման (այսուհետև՝ Որոշում) N°1 հավելվածով հաստատված ցանկում ընդգրկված հանրային կազմակերպությունների կողմից կազմված և հրապարակված գնումների պլանի համապատասխանության գնահատումը հանձնաժողովի Որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին:

Հանրային կազմակերպության գնումների պլանի մոնիթորինգը ներառում է հանրային կազմակերպությունների կարիքներին համապատասխան ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների քանակի և ժամանակացույցի գնահատումը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) 2017 թվականի տարեկան հաստատված բյուջեի հիման վրա կազմված, հանձնաժողով ներկայացրած, հետագայում հանձնաժողովի կողմից իրականացված գնումների պլանի մոնիթորինգի արդյունքում լրամշակված և ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկագրում վերահրապարակված գնումների պլանի հիման վրա:

## 1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանգազ» ՍՊԸ-ի 2017 թվականի գնումների պլանի կառուցվածքը

Ընկերությունը՝ համաձայն հանձնաժողովի Որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջների ֆինանսների նախարարության գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակել է 2017 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված գնումների պլանը:


Համաձայն ընկերության գնումների պլանի, 2017 թվականին Ընկերությունը նախատեսում է իրականացնել 477,1 մլն դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր արժեքով գնումների 37 գործարք՝ հետևյալ չափաբաժիններով (աղյուսակ 1):

Աղյուսակ 1


	Գնման առարկա	Գնումների պլանային արժեքը մլն դրամ (ներառյալ ԱԱՀ)	Գնման ուղղության մասնաբաժինը ընդհանուր գնումներում (%)
1	2	3	4
1	Ծառայություն	40.7	9%
2	Ապրանք	436.5	91%
	<b>Ընդամենը</b>	<b>477.1</b>	<b>100%</b>

Ըստ գնման ընթացակարգերի պլանավորված գործարքների վերաբերյալ տվյալների մոնիթորինգի արդյունքներն ամփոփված են աղյուսակ 2-ում:

№	Գնման ընթացակարգեր	Պլանավորված գնումների քանակը (հատ)	Գնումների սկզբնական պլանավորված արժեքը, մլն դրամ (ներառյալ ԱԱՀ)	Գնման գործընթացի մեկնարկի ժամկետները
1	2	3	5	7
1	Միակ մատակարար	5	174,3	հունվար - մարտ 2017
2	Բաց առաջարկների հարցում	8	263,0	հունվար 2017- հոկտեմբեր 2017
3	Առաջարկների հարցում առանց հայտարարության (մրցակցային շեմը չգերազանցող գնումներ)	24	39,8	հունվար 2017- հունիս 2017
	<b>Ընդամենը</b>	<b>37</b>	<b>477,1</b>	



Նկար 1. Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (քանակային)



Նկար 2. Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (գումարային)

## **2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի 2017 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքները**

Գնումների պլանի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի աշխատակազմը պարզել է, որ Ընկերության կողմից կազմված և հրապարակված գնումների պլանը ընդհանուր առմամբ համապատասխանում է հանձնաժողովի Որոշմամբ սահմանված պահանջներին:

Միևնույն ժամանակ, ընկերությունը պլանավորում է «միակ մատակարար» գնման ընթացակարգով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ից ձեռք բերել օդորանտ՝ 1 կգ 1600 դրամով (ներառյալ ԱԱՀ), այնինչ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն 1 կգ օդորանտը պլանավորել է ձեռք բերել 1477 (ներառյալ ԱԱՀ) դրամով:

Հարկ է նշել, որ գնումների գործընթացների թերի կազմակերպման արդյունքում շուկայականից բարձր գներով ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքները (շուկայական գները գերազանցող չափով) հաշվի չեն առնվի ընկերության սակագներում:

### **Առաջարկություն**

Հաշվի առնելով հանձնաժողովի Որոշմամբ սահմանված հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների 7-րդ կետը՝ գնումների գործընթացները կազմակերպելիս անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները մրցակցային եղանակով իրականացվող գնումների ծավալը մեծացնելու ուղղությամբ:

## Հղումներ

1. Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» №399Լ որոշում,
2. Հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի «Գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանման ենթակա հանրային կազմակերպությունների ցանկը հաստատելու և այդ կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջներ սահմանելու մասին» №61Ա որոշում: